
ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
ՀՈՒՇԵՐ ԻՄ ԿՅԱՆՔԻՑ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.matenadaran.am

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for supporting the publication of this book

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ЕРВАНД ТЕР-МИНАСЯН

ВОСПОМИНАНИЯ ИЗ МОЕЙ ЖИЗНИ

Издание второе, дополненное

Под редакцией и с предисловием
проф. **Паруйра Мурадяна**

Ереван 2024

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

YERVAND TER-MINASYAN

MEMORIES FROM MY LIFE

Second expanded edition

Under edition and with introduction
of prof. **Paruyr Muradyan**

Yerevan 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԻՄ ԿՅԱՆՔԻՑ

Երկրորդ՝ լրացված հրատարակություն

Պրոֆ. **Պարույր Մուրադյանի**
խմբագրությամբ և առաջաբանով

Երևան
Մատենադարան
2024

ՀՏԴ 821.19-94 Տեր-Մինասյան
ԳՄԴ 84(5Հ)
Տ 465

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ

Տ 465 Հուշեր իմ կյանքից / Երվանդ Տեր-Մինասյան; Պ. Մուրադյանի խմբագրությամբ և առաջաբանով.- Եր.: Մատենադարան, 2024.- 296 էջ և ներդիր՝ 16 էջ:

Հատորն ընդգրկում է հայ դասական բանասիրության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Երվանդ Տեր-Մինասյանի հուշերը:

ՀՏԴ 821.19-94 Տեր-Մինասյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-897-36-3
DOI 10.57155/PQXA3467

© Մատենադարան, 2024

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
(1879-1974)

Հայագիտական ժամանակագրությունը երբեմն տալիս է զուգադիպություններ, որոնք ամենևին փոխառնչված չեն, բայց հարաբերվում են գիտական արդյունքով: Հիրավի, 1887 թ. սեպտեմբերին, երբ ութամյա Երվանդ Տեր-Մինասյանը ոտք էր դնում իր պապ Մինաս քահանա Հարությունյանի տեսչությամբ հիմնադրված Հառիճի դպրոց (գյուղը առաջ կրում էր Ղփչաղ անունը, բայց ի նորո բնակեցման ընթացքում գերադասվեց Հառիճավանք հորջորջումը), ճիշտ նույն օրերին էջմիածնի վանք էր հասնում ճեմարանում աստվածաբանական առարկաներ ավանդելու հրավիրված Մաղաքիա եպս. Օրմանյանը: Հետագայում, տասնամյակներ անց, «խոհք և խօսք» հուշագրության մեջ Օրմանյանը պիտի արձանագրեր, թե «իբր անձնական զգացում կրնամ հաւաստել, թէ կեանքիս երջանկագոյն օրերն եղան՝ վարչականէ ազատ (մինչ այդ Օրմանյանը Կարնո հոգևոր առաջնորդն էր — Պ. Մ.) գրականի նուիրեալ պատուաւոր և հանգիստ կերպով էջմիածին անցուցածներս» (էջ 149): Այդ նույն խոսքերը նա մեկ տասնամյակ առաջ գրել էր Ե. Տեր-Մինասյանին հասցեագրած նամակում:

Չորս տարի անց՝ 1892-ին էջմիածնի ճեմարան ուսանելու է գալիս մոր ճակատի ոսկիները ծախելով վճարելիք հայթայթած և հայրենի գյուղի դպրոցն ավարտած Երվանդ Տեր-Մինասյանը՝ ծխատեր Գալուստ քահանայի որդին, որը վեց տարեկան հասակից մասնակցում էր հոր պատարագչությամբ կատարվող ժամասացություններին և անգիր սովորում սաղմոսներ ու աղոթքներ: Մերօրյա ընթերցողի համար հիշածս պարագաները գուցե և մանրուք են, բայց պիտի չմոռանալ, որ խոսքը հոգևոր ճեմարանին է վերաբերում, ուր տեսչության էր կոչված ճանաչված հայագետ Արիստակես եպս. Սեդրակյանը, իսկ ուսուցչություն էին անում գրաբարագետ Մկրտիչ Պալյանը, Փարսադան Տեր-

Մովսիսյանը (գիտության հայտնի Մեսրոպ Մագիստրոս անուն-տիտղոսով), Քրիստափոր Կարամուրզան և ուրիշ հեղինակություններ։ 1894-ին Սեդրակյանին փոխարինեց դարձյալ հայագիտական վաստակներով ճանաչում գտած Կարապետ Կոստանյանը, իսկ տեսչի օգնական էր կարգվել Մաղաքիա Օրմանյանի ուսուցչության մեկ տարում նրան աշակերտած ու նրա համոզկեր խորհուրդով կուսակրոնություն ընտրած Կարապետ Տեր-Մկրտչյանը։

Կարապետ վարդապետը, Գարեգին վրդ. Հովսեփյանը, Մ. Աբեղյանը, Կոմիտասը, անվանի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, Սեթ Հարությունյանն ու Ստեփան Կանայանը Երվանդ Տեր-Մինասյան աշակերտի մեջ տեսան իրենց ապագա գրչակցին ու ակներև կարողությամբ գործը շարունակողին։ Խոսքը ամենից առաջ վերաբերում է եկեղեցու և դավանությունների պատմության ավանդումն ստանձնած Կ. Տեր-Մկրտչյանին, որ Ե. Տեր-Մինասյանը ճեմարանական ուսումնառության վերջին տարին տեսուչ էր նշանակվել ու Մ. Օրմանյանից ստացած օրհնությունը փոխանցել իր Երվանդ սանին։ Հառիճից եկած քահանայի որդին 1900-ին, ճեմարանն ավարտելիս սարկավագ էր ձեռնադրվել և հավաստել Օրմանյանի ու Տեր-Մկրտչյանի ճամփով ընթանալու կոչվածությունը։ Նրա ավարտաճառը՝ «Հաղբատ և Սանահին վանքերը և նրանց նշանակությունը Հայոց պատմության մեջ», մեզանում վանական կենտրոնների պատմության ուսումնասիրման անդրանիկ փորձերից էր, Հ. Ոսկյանի մատենաշարին նախորդող մենագրություն, որի կարևորությունը «Արարատի» խմբագիր ուսուցիչը հավաստելու էր 1901 թ. հանդեսում տպագրելով։ Այլևս անկասկած էր, այդ թվում և վեհափառ հայրապետի՝ Խրիմյան հայրիկի համար, որ Երվանդ Տեր-Մինասյանը ուսումնառության պիտի ուղարկվեր եվրոպական համալսարան, թեև կային արտասահման մեկնելու արտոնագիր ստանալու դժվարություններ։ Կաթողիկոսի վճռականությունն ու մեկնողի ցուցաբերած կարողականությունը ելքի երաշխիք էին, ուստի 1900-1904 թվականներին նա արդեն Բեռլինի և Լայպցիկի համալսարանների ուսանող էր։

Կրթական այս կենտրոններում դասախոսում էին ժամանակի արևելագիտության մի քանի անվանի հեղինակություններ: Բեռլինում, օրինակ, Երվանդ Տեր-Մինասյանի սովորելիք առարկաները սահմանում և ուսումնառության ընթացքին հետևում էր եկեղեցու, եկեղեցական մատենագրության և դավանանքների պատմության խոշորագույն գիտակ պրոֆ. Ադոլֆ Հառնակը: Ուսանող հայորդին այնպիսի ջանադրություն էր ցուցաբերել և այնքան համակրանք շահել, որ երբ հանգամանքների բերումով Էջմիածնից ուղարկվող թոշակն ընդհատվեց, պրոֆ. Գութեն թույլ չտվեց ընդհատել ուսումնառությունը և սննդի աղբյուր հայթայթեց: Ի դեպ, ուսուցչապետը ըստ ամենայնի տպավորված էր իր ունեցած հայազգի սաների ցուցաբերած ընդունակությամբ ու գիտությանը ծառայելու նվիրումով (նրա ձեռքի տակով էին անցել Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին Հովսեփյանը, Հուսիկ վարդապետը):

Թե Տեր-Մինասյանի գիտական ճակատագիրը տնօրինող գերմանացի պրոֆեսորները որքան լրջորեն էին վերաբերվում իրենց սաների մասնագիտացմանը, կարելի է հավաստիանալ Տեր-Մինասյանի դոկտորական ատենախոսության թեմա ընտրելու օրինակով: Նրանք նեղ իմաստով հայագետներ չէին, բայց տեղյակ էին գիտության այդ մարզում եղած ձեռքբերումներին, մանավանդ Վիեննայի Մխիթարյանների հրապարակումների շնորհիվ (Տաշյան, Գաթրճյան, Մենևիշյան և այլք), ուստի թեմա էին ընտրում երկակի նպատակադրումով՝ հետազոտել Հայոց պատմության, եկեղեցու, մատենագրության ու բանահյուսության, լեզվի ու մշակույթի այն խնդիրները, որոնք կարոտ են մասնագիտական քննության և միաժամանակ կլրացնեն ընդհանուր արևելագիտության բաց էջերը: Պրոֆեսորներ Հայնրիխ Ցիմմերնի և Թեոդոր Նյոլդեկեի խորհուրդով Երվանդ Տեր-Մինասյանի համար ընտրվեց «Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ» (հայկական և ասորական աղբյուրների համաձայն) թեման: Հարցադրումն ինքնին նշանակում էր, թե նախ պետք է պարզել «Ասորական եկեղեցի» անվամբ ներկայացող չորս դավանությունների

(ուստի և չորս եկեղեցիներ)՝ Ուղղափառ, Նեստորական, Հուլիանիտ և Սևերյան հակոբիկ դավանանությունը միմյանցից և ապա՝ նրանց առնչությունները Հայոց եկեղեցու որդեգրած դավանությանը, նվիրապետական կառույցին, ունեցած ազդեցության ժամանակագրական ու տարածքային նկարագրին:

Այս խնդիրները մասամբ նոր կամ ի նորո էին զբաղեցնում եկեղեցիների պատմությամբ զբաղվող գիտնականներին, որովհետև հայկական ու ասորական մատենագրություններում եղած տեղեկություններին 1901 թ. ավելացել էին նորահայտ «Գիրք թղթոցի» պահպանած բացառիկ գիտական հետաքրքրություն ներկայացնող վավերագրերը: Հենց այդ թղթերը պիտի ի վերջո ճշգրտեին, թե միաբնակության ո՞ր թևին է հետևել Հայոց եկեղեցու դավանությունը: Մինչ Ե. Տեր-Մինասյանը եղած հետազոտություններում ասորականի հետ ունեցած հայոց եկեղեցական հարաբերությունները ներկայանում էին գերազանցապես պատմիչների երկրում տրվող հատակոտորային տեղեկություններով, որոնք հիմնականում ասորի քարոզիչների Հայաստանում հայտնվելու, Հայոց եկեղեցու նվիրապետական բարձրագույն տեղեր զբաղեցնելու, մի խոսքով առանձին իրողություններին էին վերաբերում, մինչդեռ անհրաժեշտ էր պարզել պատմամշակութային համակարգված պատկերը՝ Հայոց հողի վրա տեղի ունեցող քաղաքական ու դավանական կողմնորոշումների համադրումով: Կարևորագույն խնդիր էր նաև Պարսկա-բյուզանդական հակառակության անդրադարձի պարզաբանումը, որը բնավ երկրորդական չէր Հայոց քաղաքական, դավանական ու մշակութային պատմության համար:

Աղբյուրագետի բացառիկ հմտությամբ ու բարեխղճությամբ Ե. Տեր-Մինասյանը ի մի էր բերել հայկական ու ասորական մատենագրությունների մեջ եղած տեղեկությունները, ճշգրտել նրանցում հիշատակվող անձանց ինքնությունը, տեղորոշել հաճախ հնչյունափոխ կամ աղավաղումով գրառված վանական կենտրոնների ու բնակավայրերի տեղագրությունը և ըստ այնմ ձեռնամուխ եղել բովանդակային շարադրանքին: Աշխատության ատենախոսական գերմաներեն

տարբերակում հեղինակը ձեռնպահ էր մնացել հարաբերությունների սկզբնավորման շրջանը առանձին գլխով ներկայացնելուց, քանի որ այն պարբերացման ամբողջականության չէր հանգում և ապա՝ աշխատասիրողին ավելի զբաղեցնում էին 6-րդ դարից սկսվող միջեկեղեցական հարաբերությունները, երբ մեզանում քննարկման առարկա դարձավ 451 թ. տիեզերական ժողովի սահմանումները ընդունել-չընդունելու հարցը:

Անհրաժեշտ է նկատել, որ հեղինակը, լեզուներից ու աղբյուրներից բացի, լիովին տիրապետել էր նաև գերմանական արևելագիտական դպրոցի պատմա-քննադատական մեթոդին, ուստի պրոֆեսորներ Կ. Բրոկելմանը, Գելցերը և ուրիշներ (այդ թվում և իր ճեմարանական երախտաշատ ուսուցիչ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը) գիտական պատշաճ հանգստությամբ ընդունեցին իրենց դրույթներին վերաբերող դիտողությունններն ու ճշգրտումները: Նրան քաջալերողների թվում էր նաև անվանի հայագետ Հ. Հյուբշմանը:

Երվանդ Տեր-Մինասյանը առաջինը և վերջնականապես ապացուցեց Հայոց միաբնակ եկեղեցու հուլիանական լինելը գոնե մինչև Մանազկերտի 726 թ. ժողովը: Սա սկզբունքային և կարևոր եզրակացություն է դարերի մատենագրական երկերը (այդ թվում և Հովհ. Մայրագոմեցու գործունեությունը) ճիշտ հասկանալու և գնահատելու համար: Դատելով գերմաներեն հրատարակության արձագանքներից, գիրքը նշանակալիորեն խթանեց Հայոց եկեղեցու և մատենագրության ուսումնասիրությունը մեզանում և արտերկրում: Այդ պատճառով է, որ հեղինակը էջմիածին վերադառնալուց հետո էլ շարունակեց նոր նյութերի պրպտումը և Սուքիաս արքեպ. Պարզյանի ծախքով հրատարակեց նրա հայերեն թարգմանությունը՝ նկատելի լրացումներով ու վերանայումներով (Ս. էջմիածին, 1908 թ.): Հեղինակի իսկ խոստովանությամբ՝ այս աշխատությունը հիմնականում գերմանական մասնագիտական գրականության հիմամբ կազմված, տեղեկատվական առումով բովանդակալից և Հայոց եկեղեցու սպասավոր աստվածաբանի գրչով շարադրված գործ է: Այն սկսվում է հետառաքելական

շրջանի առաքելական հայրերով և վերջանում Արևելյան ազգային եկեղեցիների կազմավորման (ասորիներ և հայեր) և իսլամի ու քրիստոնեության ընդհանրության ու տարբերության կարճառոտ բնութագրմամբ:

Երիտասարդ վարդապետի ուսումնագիտական եռանդն ու աշխատելու կարողությունը սահմանելու համար ասենք, որ մեկ տարի անց վերոհիշյալ երկու-երեք հրատարակություններին հաջորդում է «Կրոնների պատմութիւն» ծավալուն աշխատությունը (1909 թ., 433 էջ): Ճանաչողական առումով այս գիրքը շահեկան էր ոչ միայն լսարանական ուսանողության, այլ նաև ընթերցող հասարակության համար առհասարակ, որովհետև կրոնի պատմությունը բազում ծալքերով քաղաքակրթության պատմություն է, ընդգրկելով եգիպտացիների, ասորաբաբելոնական, հնդկական, չինացիների ու ճապոնացիների, գերմանների, կելտերի, սլավոնների, հույների ու հռովմեացիների, Իսրայելի կրոնների առաջացման ու ձևավորման պատմությունները, վարդապետությունները: Հեղինակը դարձյալ չի ժխտում, որ ինքը շատ էջեր քաղում ու վերաշարադրում է ըստ ժամանակի հեղինակավոր աստվածաբանների, կրոնագետների ու մշակույթի պատմաբանների գրքերի, որոնցից 15 անունը անհրաժեշտ է բերել Առաջաբանում: Ուրեմն՝ նրա նպատակը ազգային ընթերցողին, մասնավորապես քահանայությանը եվրոպական գիտության նվաճումներին հաղորդ դարձնելն էր, մի տեսակ միջնադարյան նիրհից ու թմրությունից, ինչպես հնդկահայ գործիչները կասեին, եկեղեցու սպասավորին ազատելն էր, գիտական ու ճանաչողական զգաստության կոչելը: Չմոռանանք հիշել, որ 1907 թվականից Երվանդ վարդապետը ստանձնել էր նաև Էջմիածնի տպարանի վարչի հոգաբարձու պաշտոնը և միջոցներ էր որոնում հաստատության տեխնիկական վնասաբերությունը եկամտաբերության շրջելու, որը և երկու տարում հաջողվեց կատարել: Ճեմարանի լսարանական բաժնում նա միաժամանակ դասավանդում էր ընդհանուր եկեղեցական պատմություն, կրոնների պատմություն (ծրագիր էր մտցվել

Ե. Տեր-Մինասյանի պահանջով), փիլիսոփայության պատմություն և գերմաներեն՝ շաբաթական 20-22 ժամ ծանրաբեռնվածությամբ:

Ճեմարանը, ինչպես նաև վանական միաբանությունն ընդհանրապես երկրում տեղի ունեցող հասարակական ընդգրկման անցուդարձերին անհաղորդ մեկուսարաններ չէին, ուստի այստեղ էլ խմորումներ էին տեղի ունենում, գոյանում էին կուսակցական համակրություններ ու հակառակություն ունեցող խմբեր ու քննարկումներ: Խնդիրն այնքան բարդացավ, որ 1909 թ. իշխանությունները դաշնակցությանը պատկանելու մեղադրանքով բանտարկեցին ճեմարանի տեսուչ Մինաս Բերբերյանին: Ժամանակավոր նրան փոխարինող Մ. Աբեղյանին ևս չհաջողվեց անդորր հաստատել, և ճեմարանի ուսուցչական կազմը հրաժարվեց այլևս դասավանդումից: Նոր տեսուչ նշանակված իրավունքի մասնագետ Ս. Տիգրանյանը հրաժարված ուսուցիչներից մի քանիսին, այդ թվում և Երվանդ վրդ. Տեր-Մինասյանին, այլևս ուսուցչության չհրավիրեց, ինչը երփեղկումը խորացնելու նոր առիթ դարձավ: Իրադարձությունների ի մոտո վերլուծությունը սրտացավ ու նրբանկատ Գարեգին վրդ. Հովսեփյանին դրդեց իր իսկ խմբագրած «Արարատ» հանդեսում որոշ բարեշրջություններ թելադրող հոդված հրապարակել, որին զայրույթով ու հոխորտանքով պատասխանեց «բացակա անդամ» ծածկանուն առած մի պահպանողական: Ե. Տեր-Մինասյանը փորձեց կաթողիկոսական տեղակալին հասցեագրած նամակով ու ի տպագրություն հանձնած հոդվածով խորացնել ու հիմնավորել Գ. Հովսեփյանի դրույթները, սակայն տեղակալ Գ. Սուրենյանը ոչ միայն կանխեց արդեն տպագրված հոդվածի բաժանորդին հասցնելը, այլև խմբագրապետի պարտականություններից ազատեց Գ. Հովսեփյանին: 1909 թ. հուլիսի 2-ին Ե. Տեր-Մինասյանը նորընտիր կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին հայտարարություն ներկայացրեց, որ վերանորոգության պահանջը եկեղեցու և նրա կարգերի դեմ չի ուղղված, այլ թելադրվում է դեպի եկեղեցին ու կրոնը ունեցած բուռն սիրով: Իր դիրքորոշումը առավել հիմնավորելու և նենգափոխյալ մեկնաբանությունները կանխելու համար վարդապետ

գիտնականը նշյալ հոդվածներն ու կատարած դիմում-հայտարարությունները 1910 թ. հրապարակեց առանձին գրքույկով՝ «Հայոց եկեղեցու վերանորոգության խնդիրը» խորագրով, իսկ նույն թվականի փետրվարի 9-ին դիմում ներկայացրեց վեհափառին, խնդրելով ետ վերցնել հոգևոր կոչումը և իրեն դասել Հայոց եկեղեցու աշխարհական անդամների շարքը: Ստեղծված պայմաններում Ե. Տեր-Մինասյանի այս քայլը կարելի է ընդունելի լուծում նկատել, որով եկեղեցին ավարտած կարող էր համարել ծայր առած ու խորացած բանավեճը, իսկ Ե. Տեր-Մինասյանը իր գիտական ու կրթական կարողությունները կարող էր գործի դնել ազգային կյանքի այլ ոլորտներում: Եվ հիրավի, նա ուսուցչության հրավիրվեց Ալեքսանդրապոլի Արղության օրիորդաց դպրոց, ապա նաև Առևտրական դպրոց, իսկ երբ հարկադրված էր թողնել այդ քաղաքը, երկու տարի ապրեց ու պաշտոնավարեց Հայոց Ազգային խորհրդի նստոց Թիֆլիսում:

1919 թ. Ավարտին Հայաստանում ստեղծվեց համալսարանական հանձնաժողով և նրա անդամ նշանակվեց Ե. Տեր-Մինասյանը, որին հանձնարարվեց նախապատրաստել Համալսարանի բացումը Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցի շենքում: Իբրև պրոֆեսորներ ներկայացված էին Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և Ե. Տեր-Մինասյանը, դոցենտներ՝ Ստ. Մալխասյանց, Գ. Հովսեփյան, Ռ. Աբրահամյան: 1920 թ. Երկրորդ կիսամյակին Համալսարանը տեղափոխվեց Երևան, իսկ Ե. Տեր-Մինասյանը նշանակվեց Վաղարշապատի 2-րդ աստիճանի դպրոցի վարիչ, մեկ տարի անց՝ Էջմիածնի Կուլտուրպատմական ինստիտուտի գիտնական քարտուղար (այստեղ աշխատանքի անցան ժամանակի հեղինակավոր հայագետները՝ Կ. Մելիք-Օհանջանյան, Գ. Հովսեփյան, Խ. Սամվելյան, Դ. Անանուն, Թ. Թորամանյան և ուրիշներ):

Ինստիտուտը կարճատև կյանք ունեցավ, և Ե. Տեր-Մինասյանը Էջմիածնում մնաց մինչ 1931 թ., երբ գերմաներեն դասավանդելու հրավիրվեց Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1947-1964 թվականներին նա օտար լեզուների ամբիոններ է վարում, գերմաներեն դասավանդում Համալսարանում ու Վ. Բրյուսովի անվան

ինստիտուտում, միաժամանակ, հարկադրյալ ընդհատումներով, գրական-գիտական աշխատանքներ կատարում հետազոտական հաստատություններում, ապա մշտական աշխատանքի հրավիրվում Գ. Ղափանցյանի գլխավորած Լեզվի ինստիտուտ՝ բառարանագրության բաժինը վարելու։

Ե. Տեր-Մինասյանի հեղինակությամբ կամ մասնակցությամբ կազմըվեցին ու հրատարակվեցին մի քանի բառարաններ, գերազանցապես Ռուս-հայերեն։ 30-40-ական դժվար տարիներին Ե. Տեր-Մինասյանը իրեն զբաղեցնում էր գերմաներենից ու ռուսերենից պատվիրյալ թարգմանություններ կատարելով և կամ ուրիշների կատարածները խմբագրելով (Մարքս, Էնգելս, Կաուցկի, Ցվայգ, Գոնչարով, Ստալին և այլն)։ Սրանք բոլորը օրապահիկի թելադրանքով էին կատարվում, մինչդեռ նրա հոգեպահիկը հայագիտության խնդիրներն էին, որոնցով չէր դադարել պարապել այդ բոլոր տարիներին, թեև դրանք երբեմն փորձություններ էին բերում։ Այսպես, «Ոսկեդարի հայոց գրականությունը» գրքույկը (1946, 56 էջ) երախտագիտության և գոհունակության փոխարեն ամբաստանությունների դուռ բացեց «գաղափարապաշտ» միջավայրում. մարդիկ «ոսկեդար» եզրին քաղաքական իմաստ էին տալիս և եզրակացություններ կատարում։ Այնուամենայնիվ՝ այդ նույն տարում Ե. Տեր-Մինասյանը հանդգնություն ունեցավ ընթերցողին հանձնել «Նեստորականությունը Հայաստանում V—VI դարերում» մինչև այսօր էլ գործածելի ուսումնասիրությունը։ Եվ ապա՝ ձեռնամուխ եղավ Եղիշեի «Վան Վարդանայ» պատմության գիտական բնագրի պատրաստությանը։

Ե. Տեր-Մինասյանը տասնամյակների փորձով գիտեր, թե գիտական հարցերի քաղաքականացման ինչպիսի հնարավորություններ է տալիս իր վարդապետական անցյալը, ուստի գերադասեց որոշ ժամանակ զուտ աղբյուրագիտության ու բնագրագիտության խնդիրներով զբաղվել։ Քանի որ իրարամերժ գնահատությունների առարկա էր Եղիշեի երկը (Խալաթյանց, Տեր-Պողոսյանց, Կյուլեսերյան, Ադոնց, Մանանդյան, Ակինյան և ուրիշներ), իսկ գիտական հրատարակություն

տակավին չուներ, նա ձեռնամուխ եղավ գրաբարյան բնագիրը ի նորո կազմելուն և միաժամանակ կազմած-անտիպ բնագիրը արդի արևելահայերենի թարգմանելուն։ 1946-ին իբրև «Հայ պատմագիրների մատենաշարի» երրորդ գիրք լույս տեսավ նրա թարգմանած Եղիշեն՝ շուրջ 100 էջանոց բնագրագիտական հանգամանալի առաջաբանով և մատենագիտական արժեքը մինչև օրս պահպանած ծանոթագրություններով։

Ե. Տեր-Մինասյանը լուծեց Թնջուկի վերածված մի քանի հարց՝ երկի ստեղծման ժամանակը, աղբյուրները, առնչությունները Փարպեցուն։ Մեկ տասնամյակ անց (1957-ին) նա ընթերցողների սեղանին դրեց «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գիրքը՝ ձեռագրերի բաղդատությամբ։ Այն փաստորեն ամփոփում է սրբագրության զորու բոլոր ձեռագիր ու տպագիր աղբյուրները և երկար ժամանակ կունենա իր վերահրատարակությունները։

60-ական թվականներից փոփոխություններ կատարվեցին նաև հայագիտական հետաքրքրությունների ոլորտում, և Ե. Տեր-Մինասյանը վերադարձավ իր նախասիրած պատմա-բանասիրական քննությունների կամ, ինչպես ընդունված էր ասել դասական միջավայրում՝ մանր մենագրությունների ժանրին. Տիմոթեոսի «Հակաճառության» թարգմանության ժամանակը (1960 թ.), հինգերորդ դարի Հայոց եկեղեցու և գրականության հանգուցային հարցեր (1962 թ.), գրերի գյուտի ժամանակը և հարակից հարցեր (1964 թ.), Հայոց գրականության սկզբնավորումը (1970 թ.) և, վերջապես, «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» մենագրությունը, որը ուզածդ միջնադարագետ-հայագետի համար ձեռնարկային կիրառություն ունի (1968 թ.)։ Գիտնականի այս կարգի աշխատությունների պսակը 16 մանր մենագրություն ընդգրկող «Պատմա-բանասիրական հետազոտություններ» խորագրի տակ հավաքված ժողովածուն է՝ երանահիշատակ Գագիկ Սարգսյանի խմբագրությամբ։

Երվանդ Տեր-Մինասյանը շուրջ յոթ տասնամյակ նվիրումով ծառայեց հայագիտությանը (մահ. 1974 թ.), միշտ հավատարիմ մնաց մարդկային ու գիտական իր սկզբունքներին: Նրա արժանվույն գնահատությանը խոչընդոտող շատ մարդիկ ու պարագաներ վաղուց արդեն մոռացության են տրվել, մինչդեռ Ե. Տեր-Մինասյանի աշխատությունները օրական քանի անգամ գրադարակից գրասեղան են իջնում, քանի հայագետի մասնագիտական առաջադիմության ուղեկցում...

* * *

Մխիթար Սեբաստացու անհավատալիորեն արդյունավոր աշխատություններով սկիզբ առնող հայագիտության ազգային դպրոցը հին ու նոր բազում երևելի անհատականություններ է ճանաչում, և նրանց փաղանգում իր անշփոթելի տեղն ունի ուսուցչապետ Երվանդ Տեր-Մինասյանը:

Թե ինչպե՞ս, ի՞նչ մղումներով ու ջանքերի գործադրումով է նրա ինքնացումը տեղի ունեցել՝ ընթերցողը կիմանա խոր ծերության տարիներին սթափ միտքն ու հետազոտական բազմաբովանդակ կարողությունը անխաթար պահած պրոֆեսորի հիշողությունների այս հատորից: Կարելի է նույնիսկ պնդել, թե իրականում սա հուշագրություն չէ, այլ հայագիտության պատմության ընդգրկուն մեկ էջը՝ Ե. Տեր-Մինասյանի կենաց ընդելուզումով:

Երվանդ Տեր-Մինասյանը մի քիչ ավելի երջանիկ էր, քան Նիկողայոս Ադոնցը կամ նույնիսկ Հակոբ Անասյանը: Նա աստանդական չդարձավ, թեկուզ մասամբ հալածական՝ ապրեց հայրենի միջավայրում, աշխատություններից զատ՝ իր ներկայությամբ իսկ մասնակցեց ակադեմիական հայագիտության կայացմանը, թեպետ խնայվեց նրա պատվաբեր ներկայությունը Ակադեմիայի հիմնակազմում: Անշուշտ կարող էր ավելին անել, քան այն, ինչ այժմ ունենք՝ եթե ժամանակի իրավասուները ճիշտ հասկանային «վարդապետ» եզրի բնիկ «ուսուցիչ», «գիտնական» իմաստը:

Գիտական հավատամքը պահպանել էր անվարան, թեև մասամբ դարձել էր զգուշավոր. հայագետ-արևելագետ Հայկ Պերպերյանը նամակով ինձ խնդրել էր իմանալ, թե 1908 թ. լույս տեսած «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ» գիրքը վերահրատարակելու պարագային հեղինակը լրացումներ ու սրբագրումներ ունի՞ (մտադիր էր նախաձեռնել, որովհետև, ինչպես նամակում էր գրում, կորել էր Փարիզում գտնվող միակ օրինակը)։ Որդու միջոցով փորձեցի հարցումի պատասխան ստանալ, բայց ավաղ… խնդրել էր ինձ հայտնել, որ ինքը այդ մասին նույնիսկ չի լսել… (հետագայում՝ 1991 թվականի խորենացիական գիտաժողովի նախօրեին ակադ. Գագիկ Սարգսյանի համաձայնությամբ տողերիս հեղինակն այդ գիրքը 200 օրինակ բազմացնել տվեց, և գիտաժողովի մասնակիցներն իբրև նվեր ստացան)։

Գրեթե նույն տարիներին բարեկամս՝ հայագետ-արևելագետ Բաբկեն Չուգասզյանը դիմել էր Երվանդ Տեր-Մինասյանին, առաջարկելով երիտասարդ հայագետների հետ կրոնական-դավանաբանական խնդիրների շուրջ պարապմունքներ ունենալ և ի պատասխան խորհուրդ էր ստացել «աշխատանքներում զգուշավոր լինել»։

Եվ այնուամենայնիվ՝ ավելի երջանիկ էր քան Ն. Ադոնցն ու Հ. Անասյանը, մանավանդ որ երկարակյաց գտնվեց և հայրենի հողին արժանացավ…

Պարույր Մուրադյան